ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան
համայնք, Բաղրամյան 26, հեռ. 2-4393 , ֆաքս 2-44-45 ,
aparan.aragatsotn@mta.gov.am

N 40
06 մարտ 2015թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ է ուղարկվում Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 26.02.2015թ. նիստի NN 07-Ն, 08-Ն, 09-Ն, 10-Ա, 11-Ա որոշումները:

Invalid signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

ՕՐԱԿԱՐԳ

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.02.2015 Թ ՆԻՍՏԻ

1.Ապարանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի 2014 թ հաշվետվությունը

/զեկ. Ռ. Հարությունյան/

2.Ապարանի քաղաքային համայնքի 2014 թ բյուջեի կատարման վերաբերյալ Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի հաշվետվության մասին

/զեկ. Գ. Աբրահամյան/

3. Ապարանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարման թույլտվություն տալու մասին:

/զեկ. Վ. Սուքիասյան/

4. Ապարանի համայնքի սոցիալապես անապահով 11 ընտանիքների հարկային արտոնություններ տալու մասին

/զեկ. Վ. Միքայելյան/

5. Սամվել Սեդրակյանին կառուցապատման իրավունքով պատկանող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Լ. Սարգսյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2015 Թ N 07-Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2014 Թ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ << Ներքին աուդիտի>> մասին օրենքի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-ն հրամանի պահանջները և Ապարանի քաղաքապետի կողմից հաստատված 2014-2016թթ ռազմավարական ու 2014թ. տարեկան ծրագրերով, ներքին աուդիտի բաժնի կողմից 2014 թ աուդիտ է իրականացվել Ապարանի քաղաքապետարանում, համայնքային ենթակայության 8 ՀՈԱԿ-ներում, քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ապարանի տարածքային բաժնում՝ ֆինանսատնտեսական, իրավա- կազմակերպչական, տեղական հարկերի և տուրքերի հավաքագրման և մուտքագրման ուղղությամբ տարված գործունեության վերաբերյալ: ՈՒսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների, թերությունների ու բացթողումների վերացման ուղղությամբ համայնքի ղեկավարի կողմից անցկացվել են քննարկումներ, հաստատվել են գործողությունների ծրագիր, որը հետևողականորեն իրականացվում է:
Աաառանի բառաբաւին համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հանձնարարել ներքին աուդիտի բաժնին (Ռ.Հարությունյան)՝
բարձրացնել ներքին աուդիտի իրականացման արդյունավետությունը, ապահովել ուսումնասիրությունների անհրաժեշտ խորություն ու բազմակողմանիություն:
3. Քաղաքապետին՝ ապահովել աուդիտի գործունեության դերի ու արդյունավետության բարձրացումը, ուժեղացնել հսկողությունը կատարված ուսումնասիրությունների ընթացքում բացահայտված խախտումների ու բացթողումների վերացման ուղղությամբ, ձեռնարկել անհրաժեշտ և ավելի արդյունավետ միջոցներ հետագայում դրանք բացառելու համար:

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հաշվետու տարում Ապարանի քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժինը իր գործունեությունը իրականացրել է <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքին, ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-ն հրամանի պահանջներին, ինչպես նաև ներքին աուդիտի բաժնի 2014-2016 թ.թ. ռազմավարական և 2014 թվականի տարեկան ծրագրերին համապատասխան:

Համաձայն ներքին աուդիտի բաժնի 2014 թվականի տարեկան ծրագրի՝ տարվա ընթացքում աուդիտ է իրականացվել քաղաքապետարանի աշխատակազմի բաժիններում, համայնքային ոչ առևտրային 8 կազմակերպություններում և քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ապարանի տարածքային բաժնում:

Քաղաքապետարանում և ՀՈԱԿ-ներում իրականացվել է համակարգի գնահատման աուդիտ, ուսումնասիրվել են 2014 թվականի տարեկան գործունեությունները: ՈՒսումնասիրություններին մասնակից են դարձվել նաև առանձին մասնագետներ: Աուդիտի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմված արձանագրությունները, ըստ կազմակերպությունների, ներկայացվել են Ապարանի քաղաքապետին: Աուդիտի ընթացքում ստուգվել և ուսումնասիրվել են կազմակերպությունների գործունեությունները հետևյալ ուղղություններով՝
Վերլուծվել են ֆինանսատնտեսական գործունեությունները, ստուգվել են հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների կազմման արժանահավատությունը, հաստիքացուցակները, ծախսերն ու նախահաշիվները, աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի առկայությունները, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներում գործող խմբերում ընդգրկված երեխաների անձնական գործերը և դրանցում պահանջվող փաստաթղթերի առկայությունը, գործող խմբերում պարապմունքների անցկացման դրվածքը և համապատասխանումը ՀՀ կրթության ու գիտության նա;արարության կողմից հաստատված պետական կրթական չափորոշիչներին, սաների հաճախումների և բացակայությունների վիճակը, գնումների կազմակերպման դրվածքը, աշխատողների աշխատանքային կարգապահությունը և ներքին կարգապահական կանոնակարգի առկայությունն ու կիրառումը, դրամարկղային կարգապահությունը, գործավարությունը:

ՈՒսումնասիրությունների ընթացքում բացահայտվել և արձանագրվել են հետևյալ թերություններն ու բացթողումները՝

1.Մանկապատանեկան մարզադպրոց ՀՈՈԿ-ում՝

Կատարված հիմնանորոգման աշխատանքների արժեքը չի ավելացվել մարզադպրոցի շենքի հաշվեկշռային արժեքի վրա:
Դահուկավազքի խմբում պարապմունքները ձախողվել են, որի համար աշխատանքից ազատվել է մարզիչը, խմբերում շատ են սաների բացակայությունները և որի ուղղությամբ տնօրինությունը անհրաժեշտ քայլեր չի ձեռնարկում:
Խախտվել է աշխատավարձից արիմիության անդամավճարի պահումների կարգը:

2.Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՀՈԱԿ- ում՝
Սաների կողմից կատարված աշխատանքները չի հաշվառվել և մուտքագրվել հաշվապահական հաշվառման մատյանում;
Խախտվել է աշխատավարձից արիմիության անդամավճարի պահումների կարգը:

3.Քաղաքապետարանի աշխատակազմի բաժիններում՝

Քաղաքում գործող առևտրի երկու օբեկտներ չեն մուծել ալկահոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության տեղական տուրքը, որոնց նկատմամբ չի կիրառվել վարչական վարույթ: Առևտրի օբեկտներում չեն իրականացվել ստուգումներ:
Հարկային մարմիններից անհրաժեշտ տեղեկատվության բացակայության պատճառով տաքսի ծառայություններից չի գանձվել տեղական տուրք:
Գույքի հարկի և հողի հարկի գանձման համար կազմված ամփոփագրերը չեն համապատասխանում սահմանված ձևաչափին, որտեղ պահանջվում է նաև հարկ վճարողի ստորագրությունը: Բավարար աշխատանքներ չեն տարվում ապօրինի կառույցների կանխման, դրանց հաշվառման և ձևակերպման, տրված շինարարության թույլտվությունների նկատմամբ հսկողության և փաստագրման, գրանցումից խուսափող սուբյեկտների հայտնաբերման և օրինականացման ուղղությամբ:
Խախտվել է աշխատավարձերից արհմիության անդամավճարի պահումների կարգը:

4.Արվեստի դպրոց ՀՈԱԿ.-ում՝

Բանկ մուծված ուսման վարձերի համար բանկի ծառայության վճարները կատարվել է ուսման վարձերի հաշվին, այն չի վերաձևակերպվել այդ նպատակի համար բյուջեով նախատեսված գումարի հաշվին, ուսման վարձերի անդորագրերը գրվել են ջնջումներով և անընթեռնելի, ջնջումներ է նկատվել նաև քաղաքապետարանից բաց թողնված անդորագրերի գրանցման գրքում:
Խախտվել է աշխատավարձից արհմիության անդամավճարի պահումների կարգը:

5.Թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզներ ՀՈԱԿ-ում՝

Երկու մանկապարտեզներում արձանագրվել են համանման թերություններ՝ Երեխաների անձնական գործերում բացակայում են առողջության մասին բժշկի տեղեկանքները: Շենքային անբավարար պայմանների հետևանքով խնդիրներ կան սանիտարա-հիգիենիկ անհրաժեշտ պայմանների ստեղծման ուղղությամբ:
Չի պահպանվել աշխատավարձերից արհմիության անդամավճարի պահումների կարգը:

6.Քաղաքային գրադարան ՀՈԱԿ-ում՝

Հաշվեկշռում եղած մեկ դաշնամուր առանց համապատասխան ձևակերպման տրվել է թիվ 2 մանկապարտեզին:

7.Մշակույթի կենտրոն ՀՈԱԿ-ում՝

Համայնքում կազմակերպված միջոցառումների ծախսերն ամբողջությամբ կատարվել են համայնքի բյուջեի հաշվին, այնինչ կենտրոնի հնարավորությունները չեն օգտագործվել վճարովի համերգների, թատերական ներկայացումների և այլ միջոցառումների կազմակերպմամբ ձևավորել արտաբյուջետային միջոցներ:
Ձգձգվում է թանգարանի ձևավորումը:

8.Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ.-ում՝

Երկու աշխատողներ չեն ունեցել աշխատանքային գրքույկ, որոշ աշխատողների ժամանակին չի տրվել իրենց հասանելի արձակուրդը: Մի շարք հիմնարկ ձեռնարկություններ ու անհատ ձեռնարկատերեր աղբահանության ուղղությամբ ունեն զգալի պարտքեր, իսկ 4 կազմակերպություն և անհատ ձեռնարկատեր չեն կնքել աղբահանության պայմանագրեր, աղբը հեռացնում են ինքնակամ, որի համար վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենքի 43 հոդվածի համաձայն չեն ենթարկվել վարչական պատասխանատվության: Գազով աշխատող մեքենաների համար չի մշակվել մեկ կիլոմետր վազք կատարելու համար գազի ծախսի նորմա :

9.Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ապարանի տարածքային բաժնում՝

Ստուգվել է կացության ակտերի գրանցման համար գանձված և մուծված պետական տուրքերի ճշտությունը, որից պարզվել է, որ քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար գանձված տուրքերը ամբողջությամբ մուծվել են քաղաքապետարանի հաշվին, սակայն << ՎՏԲ Հայաստան>> բանկի Ապարանի մասնաճուղի աշխատողների անուշադրության հետևանքով (24 դեպք) նոտարական ծառայության համար պետական տուրքերը մուտքագրվել է որպես քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետ. տուրք:

Նախորդ տարիների ուսումնասիրությունների ընթացքում արձանագրված թերությունների ու բացթողումների համեմատությամբ դրանք զգալիորեն նվազել են, բոլոր կազմակերպություններում առկա են զգալի դրական տեղաշարժեր:
Ստուգումների ընթացքում կազմակերպություններին ցուցաբերվել են նաև անհրաժեշտ մեթոդական օգնություններ:
Կատարված ստուգումների վերաբերյալ կազմված արձանագրությունները ներկայացվել են համայնքի ղեկավարին, նրա կողմից կազմակերպվել են քննարկումներ, տրվել են անհրաժեշտ գնահատականներ և հստակ հանձնարարարականներ, որի հիման վրա ըստ գործողությունների ծրագրերի տրվել են ժամկետներ արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:

ներքին աուդիտի բաժնի պետ՝
Ռ.Հարությունյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ա,Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2015 Թ N 08-Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 69 – րդ և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35 – րդ հոդվածների պահանջներին համապատասխան՝
Ապարան քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի 2014 թ բյուջեի կատարման վերաբերյալ Ապարանի համայնքի ղեկավարի հաշվետվությանը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավար պարոն Գ. Աբրահամյանին՝
ա/. ավելի ակտիվացնել աշխատանքները հողի և գույքի հարկերի բազաների ճշտման, տեղական հարկերի հավաքագրման աշխատանքներում հրապարակայնություն ու թափանցիկություն ապահովելու, աշխատանքները պատշաճորեն կազմակերպելու ուղղությամբ:
բ/. անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների ապահովման ուղղությամբ, հետևողականորեն իրականացնել զարգացման քառամյա ծրագրով նախատեսված միջոցառումները:
գ/. լիարժեքորեն կիրառել համայնքի ղեկավարին օրենքով տրված լիազորությունները՝ հարկերի վճարումից խուսափողներից գանձումները օրենքով սահմանված կարգով կատարելու համար:
դ/. բարձրացնել աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավարների պատասխանատվությունը՝ համայնքի 2015 թ բյուջեի եկամուտների հավաքագրման գործում պատշաճ մասնակցություն դրսևորելու, բյուջեի պարտադիր կատարումն ապահովելու և բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային ծախսման ուղղությամբ:

Ավագանի՝	Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
	Գագիկ Ալեքսանյան		
	Նվարդ Բարսեղյան		
	Վարդան Բարսեղյան		
	Կարեն Գրիգորյան		
	Հովհաննես Շահբազյան		
	Արսեն Պողոսյան		

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 Թ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ապարանի քաղաքային համայնքի 2014 թ բյուջեի կատարման ուղղությամբ տարված հետևողական աշխատանքների շնորհիվ ապահովել է տարեկան պլանային ցուցանիշների կատարումը, որի արդյունքում ապահովել է համայնքի կենսագործունեության բնականոն գործունեությունը:
Ապահովվել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը:
Ավագանու որոշումները, քաղաքապետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքի բյուջեն, բյուջեի կատարողականները, տեղական հարկերի և վճարների օրենքի մուտքերը, քաղաքապետարանի գործունեության հիմնական ուղղություններն ընդգրկված են համայնքային կայքում, որը հասու է համայնքի յուրաքանչյուր բնակչի:
Համայնքի ավագանու կողմից հաստատվել է համայնքի ինքնակառավարմանը բնակչության մասնակցության ապահովման կարգը, ինչպես նաև ստեղծվել է համայնքի ղեկավարին կից զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գործընթացների խորհրդակցական մարմին, որի կողմից նախաօրեա քննարկվել են համայնքի բյուջեին և զարգացման ծրագրերին առնչվող հարցեր:
2014 թ կայացել է ավագանու 8 նիստ, ընդունվել են 87 որոշումներ:
Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել հողի և գույքի բազաների ճշգրտման, համայնքային եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճիշտ արտահայտման ուղղությամբ:
Ամենօրյա աշխատանքներ են տարվել համայնքի բյուջեի մուտքերի ապահովման, ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման ուղղությամբ:
Համայնքի սեփական եկամուտների ապահովման գործում տարվել է ամենօրյա օպերատիվ հաշվառում և վերլուծություն, բացատրական և նախազգուշական աշխատանքներ:
Հարկային պարտավորությունները խախտած 21 ֆիզիկական և 4 իրավաբանական անձանց նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ, 51 հարկատուների հետ կազմել է պարտքերի աստիճանական մարման ժամանակացույց, որոնցից 21-ն ամբողջությամբ մարել են պարտքերը:

Համայնքի 2014 թ բյուջեն պլանավորվել է հետևյալ ցուցանիշներով՝

ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	ՀՀ դրամ
ՀՀ Կառավարության կողմից տրվող դոտացիան	110186,6
Համայնքի վարչական մասով սեփական եկամուտներ	49500,0
ՀՀ Կառավարության կողմից տրվող ՔԿԱԳ բաժնի պահպանման ծախսեր	4358,6
ՀՀ կառավարության կողմից արվեստի դպրոցին տրվող սուբվենցիա	2913,5
ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝	166958,7
Համայնքի ֆոնդային մասով եկամուտներ	13000,0
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ՝	179958,7
ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ	9240,9
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ՝	189199,6

2014 թ սեփական եկամուտների կատարման արդյունքները՝

Հ/Հ	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ	ԿԱՏԱՐՎԱԾ /ՀԱԶ.ԴՐԱՄ/	ԿԱՏԱՐՄԱՆ %	2013 թ փաստացի կատարողական	2014 -2013 թ համեմատակ %
1	Հողի հարկ	7500,0	8793,3	117,2	7580,0	16,0
2	Հողի և գույքի վարձակալություն	3500,0	3763,8	107,5	3846,0	- 2,2
3	Գույքահարկ՝	16500,0	20198,9	122,4	16186,0	24,8
4	Տեղական տուրքեր և վճարներ	3800,0	4127,1	108,6	3287,0	25,6
5	Պետական տուրքեր	2400,0	2716,2	113,1	2295,0	18,3
6	Վարձավճարներ	15300,0	16026,4	104,7	14577,0	9,9
7	Վարչական տուգանք	500,0	0	0	204,0	-100
ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ		49.500,0	55.625,7	1124,4	47975,0	16,0
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ		13.000,0	5430,7	41,8	21609,7	- 298,0
ԸՆԴԱՄԵՆ ԲՅՈՒՋԵՆ		62.500,0	61.056,4	97,7	69.584,7	-14,0

Համապատասխան օրենքների կիրառման արդյունքում 2014 թ հարկային արտոնություններ են տրվել 65 քաղաքացիների, որոնցից 41-ին՝ հողի հարկի տույժերի՝ 664.365դրամի, 24-ին՝ գույքահարկերի տույժերի՝ 325.482 դրամի չափով:

Նրանցից 14-ը զոհված ազատամարտիկների ընտանիքներ են, զիջումը կազմել է՝ 225000 դրամ:

Օրենքի համաձայն զիջվել են 6 զինծառայողների ավտոմեքենաների գույքահարկը՝ 414.946 դրամի:

Վարձավճարների զեղջեր են կիրառվել մանկապարտեզներում և արվեստի դպրոցում՝ միակողմանի և երկողմանի ծնողազուրկ, բազմանդամ ընտանիքների երեխաների ուսման վարձավճարների ուղղությամբ:

Միաժամանակ, համայնքի բյուջեի ձևավորման, տեղական հարկերի, տուրքերի ու վճարների հավաքագրման գործում դեռևս կան թերություններ:

Դեռևս մեծ թիվ են կազմում պարտքատերերը, որոնց մի մասը համայնքից երկար տարիներ բացակայողներն են /նրանք ունեն շուրջ 800 հողաբաժին և գույք /, մահացածների ժառանգությունը դեռևս չբացողները /մահացածներ՝ 200 հոգի, նրանց անունով կա 500 անուն հող, 200 անուն գույք/ :

Դեռևս քիչ չեն նաև այն քաղաքացիները, ովքեր ամենատարբեր պատճառներով չեն վճարում հարկերը:

Որոշակի խնդիրներ կան տեղական տուրքերի ժամանակին հավաքագրման գործում, առևտրով զբաղվող առանձին ձեռներեցներ դեռևս դժվարությամբ և ձգձգումներով են վճարում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվության տեղական տուրքերը: Դրա պատճառներից մեկն այն է, որ օրենքով տարբերակում չի դրվում մեծ և փոքր օբյեկտների միջև, որը դժգոհությունների տեղիք է տալիս:

Հարկային տեսչությունից տաքսի ծառայությունների վերաբերյալ անհրաժեշտ բազայի չտրամադրման պատճառով տեղական տուրքեր չեն գանձվել տաքսի ծառայություն իրականացնող սուբյեկտներից:

Ֆոնդային բյուջեի թերակատարման հիմնական պատճառը վաճառքի ենթակա հողատարածքների պահանջարկի բացակայությունն է: 16 տնամերձ և 23 գյուղատնտեսական նշանակության հողամասերի օտարման նպատակով բազմաթիվ անգամներ տրվել են աճուրդ վաճառքի հայտարարություններ, սակայն գնորդների բացակայության պատճառով դրանք չեն կայացել: Պահանջարկ կա համայնքի ներսում հասարակական նշանակության հողամասերի, որի հնարավորությունները սակավ են:

Անհրաժեշտ հսկողություն և հետևողականություն է դրսևորվել ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային ծախսերի ապահովման ուղղությամբ:

2014 թ տարեկան ծախսերը կազմել են 17928,9 հազ. դրամ՝ պլանավորված 189199,6 հազարի դիմաց, կամ այն կատարվել է 95,0 %-ով:

2014 Թ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

N	ՀՈԴՎԱԾԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ՊԼԱՆ Հազ. դրամ	ԿԱՏԱՐՎԵԼ Է Հազ. դրամ	ԿԱՏԱՐՄԱՆ %
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	189199,6	179728,9	95,0
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝	69807,9	62486,3	89,5
	ՈՐԻՑ՝			
-	Օրենսդիր և գործադիր մարմինների և պետական կառավարու	42822,0	41644,3	97,2
-	Հիմնական խմբին չդասվող պարտքային պարտավորություններ	1813,9	1698,6	93,6
-	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	25172,0	19143,4	76,1
2	ՔԿԱԳ բաժնի պահպանում	4358,6	4358,6	100,0
3	Բնակարանաշինություն և կոմունալ ծառայություն	26300,9	25632,8	97,5
4	Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի մասով	20132,2	18999,1	94,4
	Որից՝			
-	Գրադարանի մասով	7300,0	6500,0	89,0
-	Մշակույթի մասով	12832,2	12499,1	97,4
5	Կրթության բնագավառի մասով՝	65205,0	64923,1	99,6
	Որից՝			
-	Նախադպրոցական կրթության բնագավառի մասով՝	23000,0	22807,4	99,2
-	Նախնական մասնագիտական կրթության բնագավի մասով՝	9495,0	9425,0	99,3
-	Արտադպրոցական դաստիարակության բնագավառի մասով	32710,0	32690,7	99,9
6	Սոցիալական հատուկ արտոնություններ բնագավառի մասով	3395,0	3329,0	98,1

Աշխատանքներ են տարվել սոցիալապես անապահով ընտանիքներին և խմբերին օգնություն և աջակցություն ցուցաբերելու, սոցիալական լարվածությունը հնարավորինս մեղմելու ուղղությամբ: Դրամական և նյութական աջակցություններ են ցուցաբերվել հայրենական մեծ պատերազմի վետերաններին, երկրապահ կամավորների և զոհվածների, պատերազմի վետերանների միություններին, եկեղեցուն, հանրակրթական դպրոցներին, ուսանողությանը, ոստիկանությանը, մարզական թիմերին, հիվանդներին, մահացածների ընտանիքներին, համատիրություններին, լրատվական միջոցներին, սոցիալապես անապահով խավերին: Ամեն տարի բոլոր 1-ին դասարանցիներին նվիրվում են պայուսակներ: Ցուցաբերած դրամական աջակցություններն ու օգնությունները կազմել են՝ 3.395.000 դրամ:

Մանկապատանեկան մարզադպրոցը, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը, մշակույթի կենտրոնը գործում են անվճար հիմունքներով, որոնցում ընդգրկված են շուրջ 350 երեխաներ: Զգալի զեղջեր են կիրառվել նաև մանկապարտեզների և արվեստի դպրոցի սաների

Համայնքում մշտապես անցկացվում են ավանդական դարձած միջոցառումներ՝ դրանք 15-ն են, Հին ամանորի տոնախմբություն, մայրության տոն, հաղթանակի տոն, Ապարանի հերոսամարտի տոնակատարություն, շրջանավարտների հավաք, ուսուցչի տոն, բուժաշխատողի տոն, զորակոչիկի օր, ոստիկանության օր, բազմաթիվ համերգներ, գրական ու երաժշտական երեկոներ, ֆուտբոլի, շախմատի, սպորտլանդիայի, ազգային խաղերի և այլ առաջնություններ, որոնց ընթացքում մասնակիցներին հանձնվել են նվերներ և դրամական պարգևներ:

Համայնքային ենթակայության հիմնարկների կողմից անցկացվում են բազմապիսի միջոցառումներ, որոնք նպաստում են բնակչության հանգստի կազմակերպմանը, երեխաների սպորտային և գեղագիտական դաստիարակությանը:

Ապարանի քաղաքային համայնքի գարգացման քառամյա ծրագրի շրջանակներում 2014 թ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Գ. Նժդեհի, Մ.Գևորգի, Գայի փողոցներում՝ ասֆալտի 400 քմ փոսային նորոգումներ:
- Թիվ 1 մանկապարտեզի մասնակի վերանորոգում
- Թիվ 2 մանկապարտեզի մասնակի վերանորոգում
- Արվեստի դպրոցի շենքի մասնակի վերանորոգում
- Մարզադպրոցի մասնակի վերանորոգում
- Ծաղկունյաց, Գայի, Մ. Գևորգի, Մաշտոցի փողոցներում անցկացվել է գիշերային լուսավորություն:
- Վերանորոգվել են գիշերային լուսավորության գործող համակարգերը
- Մաքրվել է Քասաղ գետի քաղաքով անցնող 600 գծմ հատվածը, կառուցվել է 70 մետր հենապատ
- Կառուցվել է 500 գծմ կոյուղագիծ
- Գլխավոր փողոցներում կատարվել են գծանշման, երթևեկության նշանների տեղադրման աշխատանքներ:
- Կապիտալ վերանորոգման են ենթարկվել աղբատար և սանմաքրման ավտոմեքենաները, բուլդոզերը, ձեռք են բերվել աղբարկղեր, վերանորոգվել են հները:
- Քաղաքապետարանը, Մշակույթի կենտրոնը, արվեստի դպրոցը, թիվ 1 և 2 մանկապարտեզները, մարզադպրոցը ապահովվել են նոր գույքով և սարքավորումներով / սեղան-աթոռներ, բժշկական և խոհանոցային պահարաններ, մահճակալներ, մարզական նեքնակներ, համակարգիչներ և տեխնիկական այլ սարքավորումներ, պարի հագուստներ, այլ պարագաներ/:
- Լուծվել են ընթացիք բազմաթիվ խնդիրներ:

Քաղաքապետարանի գործունեության ապահովման գործում արդյունավետ է եղել համայնքի ավագանու գործարար և համերաշխ աշխատաոճը, ձեռնարկումներին սատարելու, ցանկացած խնդիր համատեղ քննարկելու և արդյունավետ լուծումներ գտնելու հարցում:

Գնահատելով կատարված աշխատանքներն ու առաջիկա անելիքները, հաղթահարելով ներկա դժվարություններն ու պրոբլեմները, նախանձախնդիր ենք պահպանելու ձեռքբերումները և անելու հնարավորին առավելագույնը:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2015 Թ N 09-Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 16-րդ հոդվածի 20-դ կետի պահանջներին համապատասխան՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ դասական աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 21270,72 քմ հողատարածքներ՝ 18 լոտերով:
2. Հաստատել հողատարածքների օտարման մեկնարկային գները և հավելաճի քայլերը՝ համաձայն հավելված 3-ի:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդ վաճառքի հրապարակայնությունն ու թափանցիկությունը, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ այն պատշաճորեն նախապատրաստելու և անցկացնելու համար:
4. Չեղյալ համարել ավագանու 13.05.2011 թ N 24-Ն որոշման հավելվածի 1-4, 6-15, 17-18 կետերը:

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված 3

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ

	Հողատարածքի հասցեն	Ծածկագիր	Մակերես /քմ/	Մեկնարկ. գին– դրամ	Հավելածի քայլ- դրամ	Նախա-վճար	Կառուց. նպատակ
1	Պ. Սևակի 35/1	052-016	1800	583.200	30.000	29160	Բնակելի
2	Ն. Տոնոյանի 15/1	053-009-001	1709	553.716	28.500	27686	Բնակելի
3	Պ. Սևակի 39/1	051-005	1198	388152	20.000	19408	Բնակելի
4	Գայի 2-րդ փակ. 8/1	087-024	670	217.080	12.000	10854	Բնակելի
5	Թումանյան 5/5	121-147	799	258.876	14.000	12944	Բնակելի
6	Թումանյան 5/2	121-146	801	259.524	14.000	12976	Բնակելի
7	Թումանյան 7	121-072	3170	1.027.080	52.000	51354	Բնակելի
8	Լուսավորչի 32/1	122-016-001	1700	550.800	28.000	27540	Բնակելի
9	Նանսենի 12/1	100-007-001	1173	380.052	20.000	19003	Բնակելի
10	Նանսենի 2/1	100-002-001	820	265.680	14.000	13.284	Բնակելի
11	Գայի 2-րդ փակ. 12/1	087-015-001	816	264.384	14.000	13219	Բնակելի
12	Մ. Սիրեկանի 24/1	077-001-001	1070	346.680	18.000	17334	Բնակելի
13	Սարի թ. 4-րդ փ.60/1	005-022-001	940	304.560	16.000	15228	Բնակելի
14	Սարի թաղ 3-րդ փ.2/1	010-002-001	920	298.080	16.000	14904	Բնակելի
15	Դ. Կանայան 30	072-005-001	800	259.200	14.000	12960	Բնակելի
16	Վարդանանց 1	121-011-001	983	318.492	17.000	15925	Բնակելի
17	Պ. Սևակ 41/11	0051-0007	1115	361.260	19.000	18063	Բնակելի
18	Մ. Սիրեկանյան 33/1	0072-0013	786,72	254.897	14.000	12745	Բնակելի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2015 Թ N 10-Ա

ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ 11 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության <<Հողի հարկի մասին>> օրենքի 10-րդ և <<Գույքահարկի մասին>> օրենքի 15/4 հոդվածների պահանջների, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝
1. Ապարանի համայնքի սոցիալապես անապահով 11 ընտանիքների տալ հարկային արտոնություններ՝ զիջելով 10-ի հողի հարկի տույժերը և 1-ի գույքահարկը՝ համաձայն հավելված 5-ի:

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված 4

ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Քաղաքացու անուն-ազգանունը	Հողի հարկի տույժը /ՀՀ դրամ/	Գույքահարկ /ՀՀ դրամ/			ԸՆԴԱՄԵՆ /ՀՀ դրամ/	
			Ապառք	Տույժ	Ընդամեն		
1	Միքայելյան Խանթուշ	16126	0	0	0	16126	2-րդ խմբի հաշմանդամ, սոց. անապահով
2	Ամիրխանյան Կարապետ	26150	0	0	0	26150	2-րդ խմբի հաշմանդամ, սոց. անապահով
3	Ավետիսյան Արաքսի	14946	0	0	0	14946	միայնակ թոշակառու, սոց.անապահով
4	Դավթյան Աշոտ	15260	0	0	0	15260	Սոց.անապահով, չեն աշխատում
5	Դավթյան Գագիկ	25049	0	0	0	25049	Սոց.անապահով, չեն աշխատում
6	Խաչատրյան Վազգեն	25869	0	0	0	25869	Թոշակառուների ընտանիք, սոց.անապահով
7	Գասպարյան Վաղինակ	30449	0	0	0	30449	Սոց.անապահով, բազմազավակ ընտանիք
8	Կարապետյան Անդրանիկ	34308	0	0	0	34308	Սոց, անապահով, Անկողնային հիվանդ
9	Հովհաննիսյան Մանվել	11350	0	0	0	11350	Սոց.անապահով, չաշխատող
10	Դավթյան Մարսետա	26405	0	0	0	26405	Սոց.անապահով, թոշակառու
11	Փանոսյան Հարություն	0	15000	5074	20074	20074	Թոշակառու, սոց.անապահով ավտոմեքենան չի շահագործ.
		225912	15000	5074	20074	245986	

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2015 Թ N 11-Ա

ՍԱՄՎԵԼ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ապարան քաղաքի բնակիչ Սամվել Սեդրակյանի 05.02.2015 թ N 11 դիմումը, համաձայն ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ նշված 37,8 քմ հողամասը /ծածկագիր՝ 02-002-117-027/ չի դասվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի շարքին, ուստի՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ ք. Ապարան Մ. Բաղրամյան 36/4 հասցեում գտնվող Սամվել Սեդրակյանին պատկանող սրճարանի զբաղեցրած 37,8 քմ հողատարածքն ուղղակի վաճառքով օտարել Սամվել Սեդրակյանին՝ հաստատված կադաստրային գնով՝ 1 քմ 810 դրամ, ընդամենը՝ 30.618 դրամ արժեքով:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան